«Նվիրիր iPhone 16 Pro» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 Գովազդային վիճակախաղի կազմակերպիչն է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.2 Մասնակցելով գովազդային վիճակախաղին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.3 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Իրականացվող Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է Կազմակերպչի պաշտոնական Ինստագրամ էջում՝ հրապարակման միջոցով:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Գովազդային վիճակախաղի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Գովազդային վիճակախաղին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.4 Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը: Եթե մասնակիցը չի պատասխանում, հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների անհամապատասխանություն, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

2.5 Մասնակցի մասնակցությունը կարող է չեղյալ համարվել նաև այն դեպքում, երբ Գովազդային վիճակախաղի ամփոփման ժամանակ՝ 2024 թ. դեկտեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 26-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում կատարած չլինի Գովազդային վիճակախաղի 3.1 կետում նշված պայմաններից որևէ մեկը:

2.6 Գովազդային վիճակախաղին կարող են մասնակցել միայն իրական անձնական էջերը՝ անուն, ազգանուն և լուսանկարով: Կեղծ տվյալներով էջերի մասնակցությունը կչեղարկվի:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Գովազդային վիճակախաղին մասնակցության հնարավորություն կտրվի 2024թ. դեկտեմբերի 19-ին՝ Երևանի ժամանակով ժամը 18:00-ից սկսած մինչև 2024 թ. դեկտեմբերի 25-ը՝ Երևանի ժամանակով 23:59-ը ներառյալ հետևյալ պայմանները կատարած մասնակիցներին.

- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Տելեգրամի պաշտոնական ալիքին (այսուհետ՝ Տելեգրամ ալիք)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Ինստագրամի պաշտոնական էջին (այսուհետ՝ Ինստագրամի էջ)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Ինստագրամի էջում նշված հրապարակման մեկնաբանություններում նշել ինստագրամյան այն ընկերոջը ում մասնակիցը ցանկանում է նվիրել մրցանակը և հավանել հրապարակումը:

3.2 Պատահականության սկզբունքով կընտրվի մեկ հաղթող մասնակից (այսուհետ՝ Հաղթող), որին կտրամադրվի iPhone 16 Pro, 256 ԳԲ, Black Titanium (այսուհետ՝ Պարգևատրում):

3.3 Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.4 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Պարգևատրման որակի համար:

3.5 Գովազդային վիճակախաղի հաղթողը կորոշվի պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով՝ ըստ Կազմակերպչի հայեցողության:

3.6 Գովազդային վիճակախաղի արդյունքների ամփոփումը տեղի կունենա 2024թ. դեկտեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում Տելեգրամ ալիքի Գովազդային վիճակախաղի մասին հրապարակման մեկնաբանութան բաժնում՝ էկրանի տեսագրության միջոցով:

3.7 Գովազդային վիճակախաղի ընթացքում հաղթող մասնակցից բացի կրկին պատահականության սկզբունքով կընտրվեն ևս 2 մասնակիցներ: Հաղթող մասնակցի՝ խաղարկության համար նախապես հայտարարված պայմաններին չբավարարելու դեպքում նախապատվությունը կտրվի ըստ հերթականության հաղթող հաջորդ մասնակցին:

3.8 Վիճակախաղի ընթացքում յուրաքանչյուր մասնակից՝ անկախ իր մեկնաբանությունների քանակից, կարող է շահել միայն մեկ Պարգևատրում:

3.9 Պարգևատրումը Կազմակերպչի կողմից Հաղթողին կտրամադրվի մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 30-ը (ներառյալ):

3.10 Պարգևատրումը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Կազմակերպչի կողմից նշված վայր՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

3.11 Կազմակերպչի, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, «ԱԿԲԱ-ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ԵՎ «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ Պայմանների 3.1 կետում նշված Վիճակախաղի հաղթող և չեն կարող ստանալ Պարգևատրումը այլ մասնակցի կողմից Վիճակախաղում հաղթելու դեպքում:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով: